

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ
ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ ԱՐԵՎԵԼԲ-ԱՐԵՎՄՈՒՏԲ ԽԱՉՍԵՐՈՒԿՈՒՄ

Արարատ Աղասյան
Հայաստան

20-րդ դարի հայ գեղարվեստական իրականության մեջ եղել են արվեստագետներ, որոնք իրենց կենդանության օրոք լայն ճանաչում են գտել, բայց հետագայում, ճակատագրի բերումով, աստիճանաբար սովորվել կամ մոռացության են մատնվել: Նրանց շարքին կարելի է դասել նաև գեղանկարիչ Սարգիս Խաչատուրյանին, որի անունն այսօր ծանոթ է միայն մասնագետների նեղ շրջաններում:

Ս.Խաչատուրյանը ծնվել է 1886թ. օգոստոսի 15-ին Մալաթիայում: Նախնական ուսումն առել է տեղի Ազգային վարժարանում, ապա ավարտել Կարնո Սանասարյան վարժարանը, նկարչություն դասավանդել Այնթափ Վարդանյան դպրոցում, հետո հրավիրվել Հալեպ Քառասնից Մանկանց եկեղեցու որմերը նկարազարդելու համար:

Շուտով Կ.Պոլսի հայ մեծահարուստների սահմանած կրթաթոշակով Ս.Խաչատուրյանը գնացել է Հռոմ՝ Գեղարվեստի ակադեմիայում սովորելու նպատակով: Շուրջ երկու տարի այնտեղ կրթվելուց հետո նկարիչը մեկնել է Փարիզ՝ ուսումը շարունակելու և կերպարվեստի արդի միտումների հետ ծանոթանալու մտադրությամբ: 1913-1914թթ. նա հաճախել է Փարիզի Չարդարվեստի բարձրագույն պետական ուսումնարանը: Ս.Խաչատուրյանի ստեղծագործական ձևավորման համար շրջադարձային դեր է խաղացել նրա հանդիպումը ֆրանսիական կուբիստների և հատկապես՝ իմպրեսիոնիստների ու ֆովիստների հետ: Հարավային արևին սովոր, գունային սուր զգացողությամբ օժտված երիտասարդը չէր կարող անտարբեր մնալ Մոնեի, Բոնարի, Դերենի, Մատիսի և այլոց կտավների գունալուսային շլացուցիչ էֆեկտների, ինտենսիվ ճառագումների, կտրուկ հակադրումների, վառվռուն երփնախաղերի հանդեպ: Այսուհետ Ս.Խաչատուրյանի յուզաները գործերի, նրա բազմաթիվ ջրանկարների և գուաշների արտահայտչական իշխող միջոցն է դառնում լույսով թափանցված ու մաքրաձուլված, անսովոր թարմություն և ղեկորատիվ հնչելություն ձեռք բերած գույնը:

Դրա հետ մեկտեղ Ս.Խաչատուրյանի ստեղծագործական մտածողության վրա այդ տարիներին իր հետքն է թողել նաև գերմանական սիմվոլիզմը, որին հայ նկարիչը ծանոթացել է դեռ 1914-ին՝ Սյունիսենում եղած ժամանակ: Հենց այդ շրջանում է ստեղծվել նկարչի «Ես և Մահը» խորհրդավոր հորինվածքը, որն ակնհայտորեն հիշեցնում է գերմանացի, ավստրիացի և շվեյցարացի սիմվոլիստների, մասնավորապես Առնոլդ Բյոկլինի համանուն՝ կույր ճակատագրի ու Մահվան մոտիվները շրջափող աշխատանքները:

Ս.Խաչատուրյանի ստեղծագործական կենսագրության մեջ բախտորոշ նշանակություն է ունեցել 1915 թվականը: Սյունիսենից դեռ նոր Կ.Պոլիս վերադարձած

և Կարնո Սանասարյան վարժարանում նկարչություն դասավանդելու հույսը փայփայող արվեստագետը՝ զորակոչվելու, Առաջին աշխարհամարտի զոհը դառնալու ու Մեծ եղեռնի վերահաս վտանգից մի կերպ խույս տալով, մեկնել է Կովկաս: Որոշ ժամանակ նա մնացել է Բաթումում, ուր ծանոթացել է իր ապագա կնոջ՝ նկարչուհի Վավա Սարգսյանի (Վավա Սարգիս) հետ: Թիֆլիս տեղափոխվելուց հետո Ս.Խաչատուրյանը կապեր է հաստատել հայ նկարիչների, գրող-բանաստեղծների, կոմպոզիտորների՝ Վ.Սուրենյանցի, Ե.Թադևոսյանի, Ս. Սարյանի, Յովհ.Թումանյանի, Ռ.Մելիքյանի և ուրիշների հետ: 1916-ին նա դարձել է Թիֆլիսում ստեղծված հայ արվեստագետների անդրանիկ միության հիմնադիր անդամը, մասնակցել 1917-1921թթ. Թիֆլիսում, Երևանում և Կ.Պոլսում Միության կազմակերպած ցուցահանդեսներին, որտեղ հանդիսատեսին է ներկայացվել ինչպես Բաթումում, Բորժոմում ու Եսենտուկիում մինչ այդ վրձնած պեյզաժային էսյուներով, այնպես էլ «Հայ գաղթականները» և «Կովկասի հովվերգությունը» խորագրերը կրող յուղաներկ, ջրաներկ ու խժաներկ աշխատանքներով:

Հայոց ցեղասպանության ու գաղթականության թեման հաճախ է զբաղեցրել 1915-ի Մեծ եղեռնի զոհ գնացած մոր ու եղբոր մահը ողբացող արվեստագետի ստեղծագործական երևակայությունը: Մեկը մյուսի հետևից նա կատարել է դրամատիզմով լի, գեղարվեստական էքսպրեսիվ լեզվով արտահայտված այնպիսի գործեր, ինչպիսիք են «Հուսահատությունը», «Տանջանքը», «Ծարավը», «Կյանքի պայքարը», «Ուղեկորույսները», «Հայ որբերն անապատում», «Ավերակներում» եղերական հուզախոռվ պատկերները, ինչպես նաև թիֆլիսյան շրջանի իր գլուխգործոցներից մեկը՝ «Տեր Ջոր» կտավը, որտեղ մուգ կարմիր, արնաներկ երկնքի ֆոնին տպավորել է թուրք յաթաղանի սպառնալիքի տակ պար բռնած հայ մերկ գեղջկուհուն:

Նույն շրջանում Ս.Խաչատուրյանի կատարած աշխատանքների մեծ մասն են կազմում Էջմիածնի, Երևանի, Թիֆլիսի, Բաթումի եկեղեցիների ու վանքերի բակերում, փողոցներում ու կայարաններում, բացօթյա հատուկ ճամբարներում կուտակված-խմբված հայ գաղթականներին՝ որդեկորույս ծերունիներին ու մայրերին, որբացած մանուկներին պատկերող երփնագիր կտավները, ջրանկարներն ու մատիտանկարները, որոնցից են «Ճամփու հիշատակները», «Գնում են հաց բերելու», «Ճաշի սպասող որբերը», «Հյուսող որբուհին», «Որբերը», «Հայ գաղթականները» (1921, ՀԱՊ), «Որբացած երեխաները» (ՀԱՊ) ևն:

Հայ արվեստագետների միության ցուցահանդեսներում այս աշխատանքները դիտելուց հետո Յովհ. Թումանյանը բացականչել է. «Սարգիս ջան... ջո գործերը ամենալավ միջոցն են մեր տանջանքների ահավոր պատմության հետ օտարներին ծանոթացնելու համար»¹:

Ս.Խաչատուրյանի այդ պատկերների շարքում հանդիպում են նաև ազգագրական շեշտավորումներ ունեցող միաֆիգուր, երկֆիգուր կամ խմբակային դիմանկարներ, որոնցում բնության գրկում, արևափայլ պարզ երկնքի տակ ներկայացված հերոսները՝ առավելապես տարագիր կանայք ու երեխաները, տրված են մոտիկից՝ խոշոր կամ միջին պլաններով, ինչը նկարչին անհրաժեշտ է եղել ոչ միայն նրանց խարակտերային արտաքինը՝ էթնիկական բնորոշ տիպերն ու ցեղային ցայտուն դիմագծերը, այլև գեղջկական-գավառական նախշուն զգեստներն ու գունագեղ տարագները հարազատաբար, հավատարմորեն վերարտադրելու համար: Որպես օրինակ մատնանշենք Ս.Խաչատուրյանի՝ թիֆլիսյան շրջանում բնականից, իսկ հետագայում հիշողությամբ կատարած «Գեղջկուհիներ», «Բասենցի երիտասարդ կինը», «Սասունցի 90-ամյա պառավը», «Սչեցի տարագիրը», «Սասունցի կանայք Արագածի ստորոտում», «Վանեցի փախստականը» (ՀԱՊ) աշխատանքները, որոնց կերպարային-պատկերագրական համակարգը մոտ է նույն տարիներին Թիֆլիսում

գտնվող և հայ գաղթականներին բազմիցս նկարած Վարդգես Սուրենյանցի այրօրինակ հորինվածքներին, թեև դրանք լուծված են ձևաճական միանգամայն այլ սկզբունքներով:

Ս.Խաչատուրյանը հայ ժողովրդի «վշտի երգիչն» էր, բայց թեպետ հայոց ցեղասպանության ու տարագրության թեմաները տվյալ շրջանում իսկապես եղել են նկարչի ուշադրության կենտրոնում, այնուհանդերձ իր մարդկային կենսասեր խառնվածքով, կենդանի բնավորությամբ նա ոչ թե դառնացած ու հուսալքված, այլ կյանքի ուրախ, երջանիկ պահերով հրապուրվող արվեստագետ էր: Չուր չէ, որ 1915-1921 թվականներին և հետագայում նրա ստեղծած՝ տխրաբեր հուշեր ու տրամադրություններ սնուցանող, հուսահատություն ներշնչող, դիտողին հոգեպես ընկճող գործերի կողքին նկարիչն ստեղծել է նաև ժողովրդական տոների, հարսանեկան ծեսերի, գյուղական խնջույքների բազմաթիվ տեսարաններ՝ «Հարսնացուն», «Հարսնախոսություն», «Երեքշաբթի առավոտ: Լվացքի օրը Հայաստանում», «Տոնական օր Սասունում», «Վարագի տոնը», «Պար», «Ժողովրդական պար», «Հարսի երգը», «Գյուղական հարսանիք» ևն:

Հայաստանում, Վրաստանում, ինչպես և Հյուսիսային ու Հարավային Կովկասի այլ վայրերում նկարչի կատարած գործերի շարքում քիչ տեղ չեն բռնում նաև բնության պատկերները: Ս.Խաչատուրյանի հայաստանյան բնանկարներից են «Դեղին Արարատը» (1921, Ալեք և Մարի Մանուկյան թանգարան, Դետրոյտ, ԱՄՆ), «Սևանի վանքը գիշերով», «Սանահնի վանքը», «Աշունը Էջմիածնում», «Տեսարան Երևանից», «Արագած լեռը», «Հունվարյան տաք օր», «Գարուն», «Կեսօր», «Աշնան արև», «Օշական գյուղը», «Սևանա կղզու եկեղեցիները» (ՀԱՊ), «Բամբակահավաք Արարատյան դաշտում» (ՀԱՊ) և այլ աշխատանքներ:

Ս.Խաչատուրյանի արվեստի մասին ժամանակին արտահայտված հայ և օտար արվեստագետների, արվեստաբանների ու հայագետների՝ Գարեգին Հովսեփյանի, Արմենակ Սազրյանի, Արշակ Չոպանյանի, Կոստան Չարյանի, Ռաֆայել Շիշմանյանի, Յոզեֆ Ստրոմբոլսկու, Ֆրեդերիկ Մակլերի, Անդրե Գոդարի, Կամիլ Սոկլերի և այլոց կարծիքով հայ նկարիչը «ի ծնե գունապաշտ», «բնածին կոլորիստ», «փայլուն երանգող-երանգագետ» է:

Եթե Ս.Խաչատուրյանի յուղաներկ գործերում տիրապետում են վառ կարմիրների ու ցայտագեղ կապույտների ճակատային բաց հակադրումները, ապա նրա գույնները և ջրանկարները հարուստ են ավելի ներդաշնակ և ակնահաճո մանուշակագույն, ծիրանի, լաջվարդ, կանաչ ու դեղին կիսատոներով, նրբերանգների մեղմ անցումներով:

Ճիշտ է, գունային ընկալումների, գույների ընտրության ու դրանց հարաբերման առումով Ս.Խաչատուրյանը հաճախ հեռացել է տեսողական էմպիրիկ տվյալներից ու տպավորություններից՝ ձգտելով ոչ միայն վերարտադրել իրականության արտաքին նկարագիրը, այլև արտահայտել տեսածի նկատմամբ ունեցած իր կրքոտ, երբեմն «անզուսպ և պոռոտ» թվացող հուզական-զգացմունքային վերաբերմունքը: Հավանաբար, դա է առիթ տվել Կոստան Չարյանին կշտամբանքով խոսելու նկարչի առանձին գործերում նկատվող անբնական, տարօրինակ ճառագումների, գունային «չարաշահումների» և ակնհայտ չափազանցությունների մասին²:

Բայց մյուս կողմից, Ս.Խաչատուրյանի գունալուսային հենց այդպիսի՝ միաժամանակ և դեկորատիվ, և՛ զգացական-զգացմունքային սուր, թեև երբեմն չափազանցված ընկալումներն են հատկապես գրավել հայ արվեստագետի մասին կարծիքներ հայտնած օտար մասնագետներին, որոնք նրա գործերը համեմատել են ոչ միայն իմպրեսիոնիստների կամ «բարև ու վայրի» գույներ նախընտրող ֆովիստների աշխատանքների, այլև միջնադարի եվրոպական «նկարագեղ ապակիների»՝ վիտրաժների ու արևելյան «լուսազարդված ձեռագրերի» հետ:

Առանձնապես են կարևորել Ս.Խաչատուրյանի արվեստի ազգային ցայտուն դիմազօծերը, նրա գեղարվեստական՝ գաղափարական-կերպարային և ձևաճակատային մտածողության ազգային հիմքերը: Բավարարվենք հակիրճ մեջբերումներով՝

«Խաչատուրեան եւրոպական զանազան դպրոցներու ազդեցութիւնը կրած է, որ յայտ կու գա իր գործերէն շատերուն մէջ: Հակառակ ատոր ու թէւ ֆրանսական «տպաւորականութիւնը» իր արուեստին մէջ բաւական խոր ձեւ մը թողած է, բայց եւ այնպէս ան պահած է իր ցեղին ինքնայատկութիւնը, բուն երանգներու եւ արեւելեան արևի մը տակ երգող ու թրթռուն գոյնի սէրը...» («La Vie Artistique», Փարիզ)³:

«Խաչատուրեան համոզուած ազգայնական մըն է արուեստի մէջ: Ան կապուած է Հայաստանի հողին ու ջուրին, ուժեղ լոյսերուն եւ գոյներուն» («Պոլ դը Սոն») ⁴:

«Խաչատուրեան կը նկարէ երանգներու այնպիսի ճոխութեամբ, զգացումի այնպիսի խորութեամբ եւ արտայայտութեան այնպիսի ուժով, որ կը դառնայ Հայաստանի ազգային նկարիչը» (Ֆրենկ Բրենզվին)⁵:

«Եթէ վերցնենք Խաչատուրեանի անձնաւորութիւնը ամբողջապէս, ան իբրեւ հայկական երեւան կու գայ երկու արժեքով. նախ՝ մօթիվներով, որոնք հայրենի բնութենէն առնուած են, եւ յետոյ անով, որ հակառակ իր եւրոպական կրթութեան, կը խօսի զգայուն սիրտով մը ու իր արմատները Հայաստանի հարաւային գունագեղ եւ լուսաւոր գեղեցկութենէն կ'առնէ... Եւրոպան անոր համար դէպի նպատակ լոկ միջոց եղած է» (Յոզեֆ Ստրոփգովսկի)⁶:

Հայ և օտար արվեստագետներն ու գեղարվեստական քննադատները Ս.Խաչատուրյանին ընդունել են որպէս փայլուն կոլորիստի, գունային անսովոր վառ և սուր զգացողությամբ օժտված գեղանկարչի, սակայն նրան անվանել են նաև «անսխալ գծագրող», համեմատել Ֆ.Բրենզվինի հետ⁷:

Միաժամանակ խոսվել է Ս.Խաչատուրյանի կտավներում և գրաֆիկական թերթերում տեղ գտած թերթային նկարների մասին: Նշվել է, որ իր կոմպոզիցիոն հորինվածքներում նա երբեմն բավարար չափով չի մշակել միջին և հետին պլանները, ոչ միշտ է կարողացել հաղթահարել հեռանկարի կառուցման, տարածական կրճատումների, շարժման հետ կապված բարդ խնդիրները:

Բայց վերջին հաշվով այդ տարիներին Ս.Խաչատուրյանի ստեղծած աշխատանքները նկարչին բավականին լայն ճանաչում են բերել: Նրա արվեստին նվիրված մի շարք հոդվածներ են տպագրվել հայկական թերթերի, հանդեսների, տարեգրքերի՝ «Անահիտի», «Գեղարվեստի», «Ամենուն տարեցույցի», «Արագածի», «Նավասարդի», «Գեղունու», «Հայաստանի կոչնակի» էջերում, իսկ 1920-ական թվականներից նաև եվրոպական և ամերիկյան մամուլում:

Քչերը գիտեն, որ Հայ արվեստագետների միության՝ 1919-ի մայիսին երևանում բացված ցուցահանդեսից Հայաստանի Առաջին հանրապետության կառավարությունը «Ազգային պատկերասրահի հիմքը դնելու նպատակով» մի շարք նկարներ ու քանդակներ է ձեռք բերել, որոնցից հիմա Ս.Խաչատուրյանի աշխատանքներն էին: Ընդ որում ամենից բարձր գինը տրվել է նրա «Զրադաշտը Հայաստանում» մեծադիր պատմանկարին:

Եթե վստահենք Թեոդիկի «Ամենուն տարեցույցին», ապա պարզվում է, որ 1921-ի գարնանը Ս.Խաչատուրյանը նկարիչ Վ.Ախիկյանի և ճարտարապետ Գ.Տեր-Միքելովի հետ մասնակցել է բոլշևիկյան Հայաստանում շրջանառության մեջ դրված թղթադրամների նախագծերի մրցույթին և շահել առաջին մրցանակը⁸:

Հաջորդ տարվա սեպտեմբերին, գեղանկարիչ Գիգո Շարբաբջյանի ընկերակցությամբ, նա գործուղվել է Կ.Պոլիս՝ Հայ արվեստագետների միության 6-րդ, վերջինը դարձած ցուցահանդեսը կազմակերպելու նպատակով: Այդ գործուղումից Ս.Խաչատուրյանն այլևս ետ չի վերադարձել: Կ.Պոլիսի Պերայի թաղամասում գտնվող Հայ ակումբի սրահներում 1922-ի նոյեմբերին բացված վերոհիշյալ ցուցահանդեսին ներ-

կայանալուց և սեփական պատկերահանդեսը կազմակերպելուց հետո նա մեկնել է Եգիպտոս, ապա ճամփորդել եվրոպական տարբեր երկրներում ու վերջապես հանգրվանել Վիեննայում: Տեղի Մխիթարյան միաբանության հայրերի մոտ նա ծանոթացել է Յոզեֆ Ստրոփգովսկու, Շեքսպիրի թարգմանիչ Հովհաննես Մասեխյանի, եգիպտահայ արվեստագետներ Ալեքսանդր Սարուխանի և Օննիկ Ավետիսյանի, Վիեննայի «Վարպետաց դպրոցի» երիտասարդ շրջանավարտ՝ քանդակագործ Արա Սարգսյանի հետ (վերջինս կերտել է Սարգիս Խաչատուրյանի դիմաքանդակը):

Փարիզի Թրոշեի պատկերասրահում 1923-ին նկարչի բացած անհատական մեծ ցուցահանդեսից խոշոր գործարար, ադամանդի վաճառական Արմենակ Համբարձումյանը միանգամից 20 նկար է գնել, որոնք երկրորդ աշխարհամարտից հետո հայտնվել են Վենետիկում՝ Ս.Ղազար կղզու թանգարանում:

1924-ին Վիեննայում լույս է տեսել «Armenia» խորագիրը կրող Ս.Խաչատուրյանի հայկական կտավների գունավոր 43 արտատպություններից կազմված մի շքեղ ալբոմ, որի առաջաբանում են նկարչի արվեստը տարբեր եզրերից լուսաբանող և արժեքավորող Յ.Ստրոփգովսկու գերմաներենով, Ֆ.Մակլերի ֆրանսերենով, Ա.Լևիթսի անգլերենով և հայր Ներսես Ակինյանի հայերենով գրված համառոտ ակնարկները:

1926-ի գարնանը Ս.Խաչատուրյանի՝ Լոնդոնում կազմակերպած անհատական ցուցահանդեսի կատալոգի ներածականն է գրել անգլիացի հռչակավոր գծանկարիչ Ֆրենկ Բրենզվինը:

Նույն թվականին Ս.Խաչատուրյանը հաստատվել է Փարիզում, ուր նկարիչներ Հովսեփ Փուշմանի և Ռաֆայել Շիշմանյանի հետ հիմնադրել է սփյուռքահայ արվեստագետներին համախմբող «Անի» միությունը, մասնակցել Փարիզում, Բրյուսելում և Անտվերպենում գեղարվեստական այդ խմբավորման կազմակերպած ցուցահանդեսներին:

Ս.Խաչատուրյանի ստեղծագործական կենսագրության մեջ նոր փուլ են բացել 1930-1933թթ. դեպի Պարսկաստան կատարած երկու տևական ուղևորությունները: Այդ տարիներին նկարիչը հանդես է եկել՝ իրեն ոչ սովոր, վերականգնողի և ընդօրինակողի դերում: Խոսքը Սեֆյանների շրջանից (16-18-րդ դարի առաջին քառորդ), հիմնականում Շահ Աբբաս Ա-ի (1587-1629), Շահ Սեֆիի (1629-1642) և Շահ Աբբաս Բ-ի (1642-1667) ժամանակներում ստեղծված՝ Սպահանի Ալա Գափի (Բարձր Դուռ) և Չեհել-Սուլուն (Քառասուն Սյուն) արքայական պալատների, ինչպես նաև Նոր Ջուղայի մեծահարուստ հայ վաճառականներ խոջա Պետրոսի և խոջա Ավետիքի առանձնատների պատերը ծածկող որմնանկարների վերականգնման և ընդօրինակության մասին է:

Պարսկական նկարչությամբ զբաղված առանձին ուսումնասիրողների, օրինակ՝ Ա.Սազրգյանի կարծիքով, Ս.Խաչատուրյանի պատճենահանած այդ որմնանկարները թեպետ պատկանում են իրանական արվեստի «ոսկե դարը» համարվող Սեֆյանների շրջանին, սակայն ներկայացնում են դրա «անկման փուլը», քանի որ 16-րդ դարի պարսկական նկարչությանը ներհատուկ՝ դեկորատիվ-պայմանական, գծային-հարթված «երգեցիկ ոճին» 17-րդ դարի կեսերից փոխարինելու է գալիս լուսաստվերային և տոնային փոխանցումների շնորհիվ ծավալային, իսկ գծային և օղային հեռանկարի շնորհիվ տարածական պատրանք հարուցող, արևելյան արվեստի զարդանախշային մոտեցումները մինչև վերջ այդպես էլ չհաղթահարած, «հմտությունը և միամտությունը զուգախառնող», ինչ-որ տեղ տարահայաց, էլիկետիկ տպավորություն թողնող եվրոպամետ նկարչությունը, որի տարածմանը նպաստել են ոչ միայն Շահ Աբբաս Ա-ի, Շահ Սեֆիի և հատկապես նկարչական շնորհքով օժտված Շահ Աբբաս Բ-ի կողմից Պարսկաստան հրավիրված եվրոպացի վարպետները, այլև վերջիններիս մոտ ուսանած պարսիկ նաղաշներ Ռեզա Աբբասին, Մուհա-

մեղ Ջամանը, Ալի Ջաբբարը, ինչպես նաև Առաքել վարդապետ Դավրիժեցու և Խաչատուր արեղա Ջուղայեցու «Պատմություններում», Ա.Սազրզյանի, Ա.Երեմյանի, Գ.Բյուրյանի և այլոց հայագիտական, արվեստաբանական, պատմագրական, բանասիրական աշխատություններում հիշատակվող՝ 17-րդ դարի պարսկահայ նկարիչներ Սիմասը, Գակոբջանը, Ստեփանոսը, Գայրապետը և ուրիշներ:

Չնայած որ Ա.Խաչատուրյանի ընդօրինակած որմնանկարներն, ըստ Ա.Սազրզյանի, «գեղարուեստական մեծ արժեք մը չեն ներկայացներ»⁹, այնուհանդերձ դրանք կարևոր նշանակություն ունեն 17-18-րդ դարերի հայկական կերպարվեստի պատմության համար, քանզի նույն ինքը՝ Արմենակ Սազրզյանը, ինչպես և Ա.Խաչատուրյանի ընդօրինակությունները բարձր գնահատած Գարեգին Դավենիյանը, Արշակ Չոպանյանը և հայ կերպարվեստով հետաքրքրվող հեղինակավոր այլ մասնագետներ միանգամայն հավանական են համարել և նույնիսկ համոզված պնդել, որ ոչ միայն Նոր Ջուղայի հայ խոջաների առանձնատների, այլև պարսկական արքայական պալատների, ամառանոցների ու հանգստյան սենյակների պատերը զարդարող որմնանկարների մի մասը նույնպես կատարել են վերոհիշյալ հայ նկարիչները: Պատահական չէ, որ այդ որմնանկարներից մի քանիսը (օրինակ, «Որսորդը» Նոր Ջուղայից) հայկական եկեղեցիների կամ վանքերի մանրադիր պատկերներ Նոր Ջուղայից) հայկական եկեղեցիների կամ վանքերի մանրադիր պատկերներ ունեն¹⁰: Հատկանշալի է, որ 1932-ին Նյու Յորքում Պարսկական արվեստի և հնագիտության ամերիկյան ինստիտուտի հրատարակած «Պարսկական որմնանկարներ» ("Persian Frescoes") ալբոմում վերարտադրված Ա.Խաչատուրյանի 44 ընդօրինակություններից երկուսը բնորոշված են որպես «Հայկական պար» ու «Հայկական հարսանիք»:

Ա.Խաչատուրյանի պատճենահանած որմնանկարները հետաքրքիր են նաև պատկերագրական տեսակետից, քանի որ դրանք ոչ թե պայմանական՝ դեկորատիվ-զարդանախշային կամ եկեղեցական սիմվոլիկ, այլ իրականությունից ելնող ու բավականին ռեալիստորեն լուծված աշխարհիկ պատկերներ են, որոնցում դիտողին են ներկայանում ծաղկուն պարտեզների մեջ, ծառերի շուրջում մտերմաբար զրուցող, զինով լի բաժակներ միմյանց մեկնող, քնքշորեն զգվող, գրկախառնվող սիրահար զույգեր՝ նշածն աչքերով և մաքրագիծ դեմքերով երիտասարդ աղջիկներ ու պատանիներ: Եթե փորձենք սիրային-հովվերգական այս տեսարանների պատկերագրական զուգահեռները գտնել եվրոպական նկարչության մեջ, ապա ակամա կմտաբերենք ֆրանսիական ռոկոկոյի ձևավորմանը նպաստած Անտուան Վատտոյի նմանօրինակ՝ այսպես կոչված «գալանտ տեսարանները»:

Ա.Խաչատուրյանի պարսկական ընդօրինակումներն առանձնանում են մանուշակագույն, վարդագույն, կապույտ, կանաչ, մոխրագույն, ճերմակ՝ նուրբ ու գրավիչ, անուշ տոների ու երանգների արտակարգ թարմությամբ և դեկորատիվ մեղմ հնչեղությամբ, ինչպես նաև գծային ճկուն ու թեթև ոճով:

Հավատարիմ մնալով պատճենահանվող որմնանկարների գեղարվեստական լեզվին, Ա.Խաչատուրյանն այսուհանդերձ ստեղծագործաբար է մոտեցել իր աշխատանքին և ինչ-որ տեղ նույնիսկ «գերազանցել» է բնօրինակները, չեզոքացնելով դրանցում առկա՝ Ա.Սազրզյանի մատնանշած որոշ էկլետիզմը: Ուստի և չի կարելի ընդունել Ռ.Շիշմանյանի այն կտրական պնդումը, թե իբր Ա.Խաչատուրյանի ընդօրինակումներն ընդամենը նկարչի տեխնիկական «ճարտարությունը» փաստող, բայց «ստեղծագործական որևէ լուրջ արժանիք» չունեցող «մեխանիկական» աշխատանքներ են¹¹:

Հայ նկարչի Պարսկաստանից Փարիզ բերված և այստեղ 1932-ին և 1934-ին ցուցադրված այդ պատկերները հետաքրքրությամբ են դիտել ոչ միայն Արևելքի նշակույթով զբաղվող մասնագետները, այլև 20-րդ դարի մեծանուն նկարիչներ Պաբլո Պիկասոն և Հանրի Մատիսը: Նույն տարիներին Ա.Խաչատուրյանի ընդօրինակում-

ները հաջողությամբ ներկայացվել են նաև Նյու Յորքի ժամանակակից արվեստի թանգարանում ու ԱՄՆ-ի խոշորագույն քաղաքների պատկերասրահներում: Պարսկական որմնանկարների իր ընդօրինակումներից հինգը արվեստագետը նվեր է տվել Հայաստանի կերպարվեստի պետական թանգարանին¹²:

Հաջողություններով ոգևորված նկարիչը շուտով հայացքը կրկին դեպի Արևելք է ուղղել: 1938-1939թթ. նա երկու անգամ եղել է Հնդկաստանում և Ցեյլոնում, ուր ընդօրինակել է Հնդկաստանի Մահարաշտրա նահանգում գտնվող Աջանտայի վիճակագրական տաճարների, Գվալիորի նահանգում գտնվող Բագդի քարայրների և Ցեյլոնի երբեմնի մայրաքաղաք Պոլոնարուվայում գտնվող Սիգիրայի կամ Սիհագիրիի (բառացիորեն՝ Առյուծի ժայռ) մեր թվարկության 5-7-րդ դարերից պահպանված աշխարհիկ որմնանկարները:

1940-ին Փարիզ վերադարձած, բայց Երկրորդ աշխարհամարտի հետևանքով Նյու Յորքում հայտնված արվեստագետի հնդկական այդ որմնանկարների ընդօրինակումները լայնորեն ցուցադրվել են ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում, այդ թվում նաև Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» թանգարանում (1942)¹³:

1945-ին նկարիչը ձևավորել է Օմար Խայամի քառյակների ժողովածուն՝ առաջին անգամ ուժերը փորձելով գրքարվեստի բնագավառում¹⁴:

1947-ին նա հրավիրվել է Փարիզ՝ հնդկական իր թերթերն ու պաստառները Հեռավոր Արևելքի արվեստի պետական թանգարանում ցուցադրելու համար: Ցուցահանդեսը դեռ չփակված՝ վախճանվել է մարտի 3-ին և հուղարկավորվել Փարիզի գերեզմանոցներից մեկում: 1977-ին նկարչի աճյունը տեղափոխվել է Երևան:

Ա.Խաչատուրյանի բնօրինակներից և արևելյան ընդօրինակումներից շատերն այսօր գտնվում են ինչպես անհատ նկարահավաքների, այնպես էլ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, Լիտվայի, Եգիպտոսի, Իրանի, Հնդկաստանի գեղարվեստական թանգարաններում¹⁵:

1971-ին նկարչի այրին իր ամուսնու հնդկական աշխատանքները Երևանում ցուցադրելուց հետո, դրանք նվիրել է Հայաստանի պետական պատկերասրահին:

Նույն թվականին Սպահանի արքեպիսկոպոս Գարեգին առաջնորդի հրավերով Վավա Սարգիսը ներկա է եղել Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թանգարանի հանդիսավոր բացմանը. թանգարան, որի հիմնաքարը տարիներ առաջ դրել էր հայ ազգի տաղանդավոր զավակ Սարգիս Խաչատուրյանը:

Գրականություն

- 1 Տե՛ս Սփյուռքահայ արվեստի հարցեր (Արտասահմանյան մամուլի էջերից). - Հայագիտությունը արտասահմանում, Գիտա-ինֆորմացիոն բյուլետեն, Գ մատենաշար, թիվ 1(22), էջ 4:
- 2 Տե՛ս **Ձ[արյան]. Նկարչություն.** - «Բարձրավանք», Կ.Պոլիս, 1922, հունվար, թիվ Ա, էջ 38:
- 3 Տե՛ս Ա.Խաչատուրեանի նոր մեկ նկարահանդեսը.-«Նաւասարդ», Պուքրեշ, 1925, Բ տարի, Ա պրակ, էջ 31:
- 4 Տե՛ս Ա.Խաչատուրեանի արուեստը.-«Կեանք եւ արուեստ» (տարեգիրք), Փարիզ, 1931, Ա տարի, էջ 121:
- 5 Տե՛ս Ա.Ս.Խաչատուրեանի նկարահանդեսը Լոնտոնի մէջ.-«Արագած», Փարիզ, 1926, 15 հունիս-1 հուլիս, թիւ 12-13, էջ 7:
- 6 Տե՛ս Ստրչիկովսքի եւ հայ նկարչութիւնը.-«Նաւասարդ», Պուքրեշ, 1924, Ա տարի, Զ պրակ, էջ 183:
- 7 Տե՛ս, օրինակ, Խաչատուրեանի վերջին նկարահանդեսը.-«Նաւասարդ», Պուքրեշ, 1925, Բ տարի, Ա պրակ, էջ 91:

- 8 Տե՛ս Արգ.Խաչատուրեան.-«Ամենուն տարեցոյցը», Կ.Պոլիս, 1922, էջ 211:
- 9 **Արմենակ Սազըզյան**. Սեֆեվեան նկարչութիւնը (ցուցահանդէսի մը առթիւ).-«Տարեցոյց Ա.Փ. Ազգային հիւանդանոցի», Կ.Պոլիս, 1934, էջ 32:
- 10 Տե՛ս [Ա.Չոպանյան]. Սարգիս Խաչատուրեանի պարսկական որմնանկարները.-«Անահիտ», Փարիզ, 1935, Զ տարի, թիւ 1-2, էջ 63; Սարգիս Խաչատուրեանի մէկ նամակը.- «Անահիտ», Փարիզ, 1949, Ժ տարի, թիւ 1, էջ 44; **Պարեգին Գոլսեփյան**.Նկարիչ Սարգիս Խաչատուրյան.-Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հատոր Բ, Երևան, 1987, էջ 225-226:
- 11 Տե՛ս **Ռաֆայել Շիշմանյան**. Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 342-343:
- 12 Տե՛ս Գայաստանի ազգային պատկերասրահի բարերարները, Երևան, 2001, էջ 7:
- 13 Մանրամասները տե՛ս **Olan D.** Indian Murals and Sarkis Katchadourian, N.Y., 1942:
- 14 Բանաստեղծական այդ ժողովածուի համար Ս.Խաչատուրյանի նկարած բնօրինակ էսքիզները պատկանում են Ջորջ Մարտիկյանին (Սան-Ֆրանցիսկո, ԱՄՆ):
- 15 Նկարչի գործերն իրենց հավաքածուներում պահող գեղարվեստական թանգարանների ընդարձակ ցանկը տե՛ս Սարգիս Խաչատուրեան.-«Գայաստանի կոչնակ», Նյու-Յորք, 1939, 14 հոկտեմբերի, թիւ 41,էջ 1122: